ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-22-12/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 21.03.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Դավթյան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն՝ Ա. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 17.02.2022թ. կնքված № ԳՀԾՁԲ-22-12/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի №1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Պատվիրատուին մատուցել Պայմանագրի № 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված № 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 9 200 000 (ինը միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Ծառայության գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետով և սույն համաձայնագրի № 2 Հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը (կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Տ և ՀԿԳ վարչությունը):

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Դավթյան» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ Տավուշի մարզ գ. Սևքար 19փ. 1 նրբ.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	տուն 2
Հ/Հ 900011144079	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 1510029308740100
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	ՀՎՀՀ 07618736
	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1
№ԳՀԾՁԲ-22-12/2-1 գնման պայմանագրի N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	Գինը /ՀՀ դրամ/	Գումար /ՀՀ դրամ/	Ժամանակացույց
1.	**Համակարգի օժանդակ ծառայություններ,** այդ թվում՝	դրամ	1		9200000	Ծառայությունների մատուցումը 2022թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 15.12.2022թ.
1.1	ՀՀ ՊՆ պաշտոնական կայքի և «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկի կայքերի սպասարկում, բջջային հավելվածի սպասարկում, գրավոր թարգմանության ծառայություն	հատ	4	2300000		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դավթյան» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N2
№ԳՀԾՁԲ-22-12/2-1 գնման պայմանագրի N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Դիմաց նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 26.12.2022թ, ընդ որում՝			
Հ/հ	անվանումը	CPV կոդը	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Համակարգի օժանդակ ծառայություններ, այդ թվում՝ ՀՀ ՊՆ պաշտոնական կայքի և «Զինուժ Մեդիա» պետական հիմնարկի կայքերի սպասարկում, բջջային հավելվածի սպասարկում, գրավոր թարգմանության ծառայություն	72251500/501	2300000	4600000	6900000	9200000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դավթյան» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԱՎԹՅԱՆ